Արտաքին գերատեսչություն

CIVIL SOCIETY COOPERATION

Բեռլին, 26-ը սեպտեմբերի 2024

«Ընդլայնված համագործակցություն Արևելյան գործընկերության անդամ պետությունների և Ռուսաստանի քաղհասարակությունների հետ»

«Արևելյան գործընկերության անդամ պետությունների և Ռուսաստանի քաղաքացիական հասարակությունների հետ ընդլայնված համագործակցություն» ծրագիրը (ÖPR-Programm) հասարակական կազմակերպություններին խրախուսում է որպես կարևոր գործիչներ դերակատարություն ստանձնել ժողովրդավարական զարգացումներում և աջակցություն ցուցաբերել ծրագրում ընդգրկված երկրներում ընթացող տևական անցումային գործընթացներին: ÖPR-Programm-ի միջոցով Գերմանիայի Դաշնային կառավարությունը խրախուսում է այնպիսի նախաձեռնություններ, **որոնք համագործակցության երկարատև հասարակական համակարգեր կստեղծեն կամ կզարգացնեն դրանք Գերմանիայի և Արևելյան գործընկերության անդամ պետությունների (Հայաստանի, Ադրբեջանի, Բելառուսի, Վրաստանի, Մոլդովայի Հանրապետության և Ուկրաինայի) կամ Ռուսաստանի ժողովրդավարական, ոչ պետական դերակատարների միջև: Սա ենթադրում է համագործակցություն և հանձնառությունների իրավահավասար բաշխում Գերմանիայում և ծրագրում ընդգրկված երկրներում գործող նախագծային գործընկերների միջև:** Սա ներառում է մշակութային և կրթաքաղաքական նախագծերի ողջ տարրապատկերը (մասնավորապես՝ մեդիան, գիտությունը, կրթությունը, այդ թվում՝ արհեստագործական կրթությունը, մշակույթը, լեզուն և երիտասարդների հետ իրականացվող աշխատանքը):

Միջազգային իրավունքի խախտմամբ Ուկրաինայի դեմ Ռուսաստանի սանձազերծած հարձակողական պատերազմի երրորդ տարում և քաղհասարակության դերակատարների և կառույցների համար գնալով նեղացող տարածքների/հնարավորությունների առումով վերջիններիս ցուցաբերվող աջակցությունը ÖPR-Programm ծրագրի բոլոր մասնակից երկրներում շարունակում է կարևոր մնալ: Հաշվի առնելով այդ զարգացումները՝ **2025թ. ÖPR ցիկլի մեջ** մեր **հիմնական նպատակն** է մնում (1) **հասարակական կառույցների զորացումը և վերականգնումը եվրոպական ինտեգրացիայի և համագործակցության համատեքստում,** (2) **Ռուսաստանի ապակայունացնող փորձերի դեմ դիմադրունակության զորացման և անկախ, չեզոք ու համապարփակ (ինկլյուզիվ) լուսաբանման խրախուսում՝** նաև վտարանդիության մեջ գտնվող

լրագրողների և հասարակական դերակատարների պրոֆեսիոնալիզմը, փոխկապակցվածությունը և աշխատանքը շարունակելու հնարավորությունները ապահովելու միջոցով, ինչպես նաև (3) **կանանց, մարգինալացված և խոցելի խմբերի քաղաքական և հասարակական մասնակցայնության զորացում՝** Ֆեմինիստական արտաքին քաղաքականության ուղենիշների համաձայն։

Այս նախաձեռնություններով մենք ցանկանում ենք զորացնել Արևելյան գործընկերության անդամ պետությունների քաղհասարակություններին և Ռուսաստանի ու Բելառուսի ժողովրդավարական քաղհասարակություններին իրենց աշխատանքում և բարձրացնել նրանց դիմադրունակությունը հասարակության մեջ առկա ապատեղեկատվության հանդեպ։ Միասնական արժեքների և մարդու իրավունքների շուրջ քաղաքական-մշակութային շփումները, քննարկումներն ու նախաձեռնությունները, ինչպես նաև երիտասարդների համալսարանական, մասնագիտական, քաղաքացիական կրթությանն ուղղված նախագծերը նույնպես կարող են շահագրգռել ավելի ակտիվ հասարակական գործունեության։

I. **Բոլոր նախագծերը պետք է հետապնդեն <u>հիմնական նպատակներից</u> առնվազն մեկը.**

1.*Բազմակարծության և դիմակայունության ամրապնդում՝* ի նպաստ խոսքի և լրատվամիջոցների ազատության և ապատեղեկատվության դեմ պայքարի

Բազմակարծության գաղափարը ժամանակակից ժողովրդավարությունների առանցքային և հիմնարար բաղադրիչն է, որի օրինականությունն առաջին հերթին բխում է նաև հասարակության մեջ առկա կարծիքների, շահերի և նպատակների տարատեսակության հանդեպ հարգանքից և ճանաչումից։

ÖPR-Programm-ի շրջանակում կխրախուսվեն այնպիսի նախագծեր, որոնք նպաստում են տեղեկատվության, կարծիքների և լրատվամիջոցների բազմազանությանը, ապատեղեկատվության դեմ պայքարին, բարձրացնում են դիմակայունությունը։ Հատկապես հաշվի կառնվեն այն նախագծերը, որոնք մեդիադերակատարների զորացման և որակավորման միջոցով կնպաստեն անվստահելի և կեղծ տեղեկատվության հանդեպ հասարակությունների դիմակայունությանը, ինչպես նաև կապահովեն ավելի արդյունավետ հասանելիություն որակյալ ու բազմակարծիք (տեղական) լրատվությանը։ Բացի այդ՝ աջակցության արժանի են ժամանակավոր տարագրության մեջ գտնվող լրագրողներն ու մեդիագործիչները, որոնց պետք է հնարավորություն տալ շարունակելու աշխատել իրենց մասնագիտությամբ, մինչև հնարավոր լինի նրանց վերադարձը հայրենիք։

2. Արժեքների և մարդու իրավունքների վերաբերյալ խոսույթների խթանում՝ հանուն փոխըմբռնման

Այս նպատակով աջակցություն կարող են ստանալ հատկապես փոխանակման և մշակութային նախագծերը։ Կազմակերպվող հանդիպումները պետք է հնարավորություն տան անդրադառնալու հիմնարար արժեքներին՝ մարդու իրավունքների հարգմանը, օրինական կառավարմանը, դատարանների

անկախությանը, անձի կյանքի և ազատ զարգացման իրավունքին, մեծամասնության սկզբունքով որոշումներ կայացնելու սկզբունքին: Այս արժեքների համար միասնական պայքարը կխթանի փոխըմբռնումը ԱրլԳ տարածաշրջանում, կնպաստի այս երկրների վերաբերյալ ընկալմանը Գերմանիայում:

Խրախուսման արժանի են համարվում այն նախագծերը, որոնք քաղհասարակական շփումների կամ մշակութային նախաձեռնությունների միջոցով կուսուցանեն, կտարածեն, կամրապնդեն վերոնշյալ հիմնարար արժեքները և կնպաստեն գործընկեր պետությունների քաղհասարակությունների միջև կապերի հաստատմանը: Աջակցություն կարող են ստանալ նաև այնպիսի նախաձեռնություններ, որոնք Գերմանիայում տեսանելի կդարձնեն Արևելյան գործընկերության անդամ երկրների առանձնահատուկ ինքնությունները:

3.Ապագայի հեռանկարներ և ժողովրդավարության տրանսֆորմացիա՝ ի նպաստ ժողովրդավար երկրների զորացման, կոռուպցիայի դեմ պայքարի, ԵՄ մերձեցման, նաև անհատական կրթական հնարավորությունների հասանելիության

Այս նպատակն իրագործելու համար կարող են աջակցություն ստանալ այն նախաձեռնությունները, որոնք խթանում են ժողովրդավարական ջանքերը՝ ի նպաստ համընդհանուր անվտանգ հասարակական հեռանկարների: Մասնավորապես Ուկրաինայում մեզ համար առաջնային են տրանսֆորմացիոն գործընթացներին ցուցաբերվող աջակցությունը և այն քաղհասարակական կառույցների պահպանումն ու զարգացումը, որոնք ավերվել են Ռուսաստանի հարձակողական պատերազմի հետևանքով: Բացի այդ մենք աջակցում ենք այնպիսի նախագծերի, որոնք միաժամանակ իրենց ուշադրության կենտրոնում են պահում Ուկրաինայի, Մոլդովայի և Վրաստանի հեռանկարային անդամակցությունը Եվրամիությանը: Աջակցության արժանի են նաև բուհական, մասնագիտական, հասարակագիտական ու քաղաքագիտական կրթության, վերապատրաստում-ների այն ծրագրերը, որոնք նպաստում են հասարակական առավել ակտիվ գործունեությանը և հնարավոր դարձնում քաղաքական և հասարակական մասնակցայնությունը:

4.Աջակցություն երկխոսությանը և մերձեցմանը. փոխվստահության ամրապնդման միջոցառումներ՝ ի նպաստ տարածաշրջանային հակամարտությունների հեռանկարային հաղթահարման

Աջակցության կարող են արժանանալ այն միջոցառումները, որոնք մշակութային և կրթական գործիքների կիրարկմամբ կարող են ազդել չլուծված հակամարտություններում ճգնաժամերի կանխարգելման կամ հաղթահարման վրա՝ այդպիսով հիմք դառնալով ժողովուրդների հեռանկարային բարեկամության համար: 2025 թվականին այս կատեգորիան

կվերաբերի հատկապես հարավկովկասյան երկրներին (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան), ինչպես նաև Մոլդովայի Հանրապետությանը։
Բացի այդ՝ Ռուսաստանի հարձակողական պատերազմի հետևանքով իրենց հայրենիքից դուրս են եկել նաև շատ ուկրաինացիներ, ռուսներ և բելառուսներ՝ հաստատվելով ԱրլԳ անդամ այլ պետություններում, քանի որ իրենց համոզումների համար ենթարկվել են սպառնալիքների և ճնշումների։ Աջակցության համար կդիտարկվեն նաև այն նախագծերը, որոնք նկատի կունենան այս մարդկանց՝ իրենց նոր հայրենիքի քաղաքացիական հասարակության հետ միավորվելու հանգամանքը։

II. **<u>2025 թվականին</u> ընտրության միջոցով նախապատվությունը կտրվի այն նախագծերին, որոնք կանդրադառնան <u>հետևյալ ուղղություններից</u> մեկին.**

1. Քաղհասարակական ցանցերի զորացում և վերականգնում եվրոպական ինտեգրացիայի և համագործակցության համատեքստում

Ռուսաստանի հարձակողական պատերազմը հսկայական մարտահրավերների առջև է կանգնեցրել քաղհասարակական դերակատարների աշխատանքը, մասնավորապես նաև քաղհասարակական տարածքների (հնարավորությունների) ահագնացող սահմանափակումների պատճառով։ Մենք ցանկանում ենք հետայսու ևս զորացնել ոչ պետական կառույցները և աջակցել քաղհասարակությունների վերականգնմանը մասնավորապես ԵՄ թեկնածու երկրներ Վրաստանում, Մոլդովայի Հանրապետությունում և հատկապես՝ Ուկրաինայում՝ ի շարունակություն նաև 2024թ. հունիսին Բեռլինում կայացած Ukraine Recovery Conference համաժողովի, ինչպես նաև Հայաստանում։ Մենք ցանկանում ենք առավել ուժգին խրախուսել այնպիսի նախագծեր, որոնք կնպաստեն ԵՄ մերձեցման գործընթացին ցուցաբերվող աջակցությանը, և աջակցել այնպիսի անհրաժեշտ բարեփոխումների, որոնք միտված են, օրինակ, ժողովրդավարության խրախուսմանը, օրենքի գերակայությանը և կոռուպցիայի հաղթահարմանը։

Սրան կնպաստեն նաև երիտասարդների միջև շփումների և հանդիպումների ձևաչափերը՝ Հայաստանի, Վրաստանի, Մոլդովայի Հանրապետության և Ուկրաինայի շեշտադրմամբ։

2.Ռուսաստանի ապակայունացման փորձերի դեմ դիմադրունակության զորացում և անկախ, չեզոք ու համապարփակ լուսաբանման խրախուսում

Աջակցություն պետք է ստանան այն նախագծերը, որոնք պայքարում են ապատեղեկատվության և կեղծ լուրերի դեմ, նպաստում են այսպես կոչված «թվային միջավայրից դուրս գտնվող անձանց» մեդիագրագիտության բարձրացմանը՝ խթանելու համար գիտակից և ինքնուրույն և քննադատական մեդիասպառման կարողությունները։ Դա ներառում է մասնավորապես լրագրողների և մեդիագործիչների մասնագիտացում, շփումներ և վերապատրաստում։ Ռուսաստանի և Բելառուսի պարագայում ÖPR ծրագիրը աջակցում է նաև ժամանակավոր տարագրության մեջ գտնվող կառույցների ստեղծմանն ու կայացմանը։ Հատկապես ռուսական,

բելառուսականմեդիագործիչների գործունակության ապահովումը՝ անկախ իրենց գտնվելու վայրից, կխրախուսի քննադատական մեդիասպառումը՝ զորացնելով նաև ժողովրդավարական կառույցները այդ երկրներում: Միաժամանակ կապահովվի անկախ լրատվություն ինչպես այդ երկրներում ապրող, այնպես էլ տարագրության մեջ գտնվող մարդկանց համար:

3.Կանանց, խոցելի և մարգինալացված խմբերի քաղաքական և հասարակական մասնակցայնության ամրապնդում

Այս խմբին են պատկանում այն նախագծերը, որոնք խթանում են կանանց, LGBTQI և խոցելի կամ մարգինալացված խմբերի հասարակական ներգրավվածության և հասարակական այլ դերակատարների հետ նրանց փոխկապակցվածության վերաբերյալ ընկալումները: Դաշնային կառավարության որդեգրած Ֆեմինիստական արտաքին քաղաքականության նպատակն է, որ հանրության բոլոր խմբերը մասնակից դառնան քաղաքական որոշումների կայացմանը, և որ ամրապնդվի նրանց քաղաքական և հասարակական մասնակցությունը: Սա վերաբերում է նաև նախաքաղաքական և քաղաքական դաշտերում կանանց դեռևս ոչ բավարար ներկայացվածությանը:

Այս կետով աջակցություն կարող են ստանալ մասնավորապես այն նախագծերը, որոնք համագործակցում են վտանգված հասարակական գործիչների և խոցելի խմբերի՝ երեխաների և պատանիների, հաշմանդամություն ունեցող մարդկանց և LGBTIQ անձանց հետ և ամրապնդում են նրանց քաղաքական և հասարակական մասնակցությունը, ինչպես նաև նախագծեր, որոնք իրականացվում են քաղաքային կենտրոնացված բնակավայրերից հեռու՝ գյուղական շրջաններում:

<u>Ֆորմալ նախապայմաններ (հավելյալ տեղեկություններ կարող եք քաղել FAQ-ից).</u>

Քաղհասարակական նախագծերը կարող են աջակցություն ստանալ, եթե իրականացվում են **Գերմանիայում, Հայաստանում, Ադրբեջանում, Բելառուսում, Վրաստանում, Մոլդովայի Հանրապետությունում, Ուկրաինայում կամ Ռուսաստանում** և ներառում են առնվազն երկու կազմակերպություն (որոնցից մեկը՝ Գերմանիայում և առնվազն մեկը՝ թիրախային երկրներից մեկում): «Վայմարյան եռանկյունի» համագործակցության» շրջանակում մեծապես ողջունելի է **ֆրանսիական** կամ **լեհական** որևէ գործընկեր կազմակերպության լրացուցիչ մասնակցությունը: Աջակցություն կարող են ստանալ նաև տարածաշրջանում ժամանակավոր տարագրության մեջ գտնվող նախագծերը, որոնք ունեն գործընկեր կազմակերպություններ:

Աջակցության ենթակա են միմիայն <u>քաղհասարակական</u> նախագծերը, այնպիսիք, որոնց նախաձեռնողները դուրս են պետական և տնտեսական ոլորտներից:

Աջակցային միջոցները ծրագրային միջոցներ են: Դա նշանակում է, որ այդ միջոցները սահմանվում են տարեկան բյուջեի սկզբունքով: Ուստի, սկզբունքորեն, նախագծերը պետք է իրականացվեն 2025 թվականին և **ավարտվեն 2025 թվականի դեկտեմբերի 31-ին**: Միայն հիմնավորված բացառիկ դեպքերում ԳԴՀ արտգործնախարարությունը կարող է համաձայնություն տալ տարեկան կտրվածքն անցնող նախագծերին:

Մեկ նախագծի աջակցության նվազագույն գումարը կազմում է մոտավորապես 50.000 եվրո, առավելագույն աջակցային գումարի համար շեմ սահմանված չէ:

Նախագծերի էսքիզները (գերմաներեն և անգլերեն) կարող են ներկայացվել **բացառապես**

http://oper.diplo.de կայքով

մինչև 2024 թվականի հոկտեմբերի 14-ից մինչև նոյեմբերի 08-ը:

Այս կայքում հավելյալ տեղեկություններ և ցուցումներ կգտնեք նախագծերի էսքիզները ներկայացնելու վերաբերյալ: Արդեն ներկայացված նախագծերի մեջ հնարավոր չէ փոփոխություններ անել կամ վերջնաժամկետից հետո հավելյալ թղթեր ուղարկել:

Սկզբունքորեն հատկացումն ընդունող կողմերը պարտավոր են ներկայացնել հատկացման օգտագործման պատշաճ ապացույցներ և նախագծի վերաբերյալ զեկույցներ: Դրանք անհրաժեշտ են Արտաքին գործերի դաշնային գերատեսչությանը և Դաշնային արտգործնախարարությանը՝ համապարփակ ստուգելու նախագծերի և աջակցային ծրագրի միջոցների ճիշտ օգտագործումը և արդյունավետությունը: Լրացուցիչ տեղեկություններ կարող եք գտնել ներբեռնումների Ընդհանուր և հատուկ կողմնակի դրույթներ բաժնում, ինչպես նաև դիմումի վերաբերյալ որոշման շրջանակում:

Նախքան հարցեր ուղարկելը խնդրում ենք ուսումնասիրել «Հաճախ տրվող հարցեր» բաժինը: Եթե Ձեր հարցն այնտեղ պարզաբանված չէ, Ձեզ հաճույքով կպատասխանի ԳԴՀ արտաքին գործերի դաշնային գերատեսչության իրավասու թիմը: Խնդրում ենք գրել էլ. հասցեին՝ oepr@bfaa.bund.de կամ բովանդակային հարցերի դեպքում՝ ԳԴՀ արտաքին գործերի նախարարության հետևյալ աշխատակիցներին.

պարոն Ֆաբիեն Նես. 030-1817 1376 / 601-1@diplo.de (Բելառուս, Ռուսաստան)

տիկին Յուլյա Լութեր. 030 – 1817 4272 / 601-5@diplo.de (Մոլդովա, Ուկրաինա)

տիկին Մարիետե Փֆիսթեր. 030 1817 7975 601-6@diplo.de (Հայաստան, Ադրբեջան, Վրաստան)

պարոն Դանիել Դեմելե. 030 – 18 4730 14 101 / daniel.demele@diplo.de

http://oper.diplo.de կայքից օգտվելիս **տեխնիկական դժվարությունների** հանդիպելու դեպքում կարող եք դիմել տիկին Յուլյա Մելթկեին՝ հետևյալ

հեռախոսահամարով և էլ. հասցեով. 030 18 4730 14125, bf-f-pf-1-17@auswaertiges-amt.de :